ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/224

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.05.2022թ. թիվ 26/26-1/8599-2022 գրությամբ «Լուքսորիա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի 04.05.2022թ. թիվ 1-323 գրության հիման վրա, 12.05.2022թ. թիվ 26/26-1/8599-2022 գրությամբ նախաձեռնել է «Լուքսորիա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Լուքսորիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Լուքսորիա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Լուքսորիա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/224 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 10:33-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.05.2022թ. թիվ 1-323 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի /այսուհետ՝ ՊՈԱԿ/ և «Լուքսորիա» ՍՊԸ-ի /այսուհետ՝ կազմակերպություն/ միջև 2022 թվականի մարտի 17-ին կնքված «ՊՄԱԹ-ԳՀԾՁԲ-22/4-2» ծածկագրով պայմանագրի /այսուհետ՝ պայմանագիր/ 1.1 կետի համաձայն կազմակերպությունը պարտավորվել է ՊՈԱԿ-ին մատուցել պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /այսուհետ՝ ծառայություններ/: Պայմանագրի թիվ 1 հավելվածի համաձայն ծառայությունը մատուցվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2022թ. դեկտեմբերի 20-ը՝ յուրաքանչյուր դեպքում ծառայությունը մատուցվում է Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 20 օրվա ընթացքում:

Պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Տեղեկացնում եմ, որ ՊՈԱԿ-ի տնօրենի 2022 թվականի մարտի 17-ի թիվ 1-190 գրությամբ դիմել ենք կազմակերպությանը 409 SS 60 պետհամարանիշի ավտոմեքենայի

ընթացիկ նորոգման աշխատանքներ կազմակերպելու նպատակով, սակայն 2022 թվականի մայիսի 02-ի դրությամբ կազմակերպության կողմից ծառայությունները մատուցված չեն: ՊՈԱԿ-ի տնօրենի մեկ այլ, 2022 թվականի 23-ի թիվ 1-202 գրությամբ դիմել ենք 523 SS 60 պետհամարանիշի ավտոմեքենայի համար սակայն 2022 թվականի մայիսի 02-ի դրությամբ կազմակերպության կողմից ծառայությունները մատուցված չեն: Հաշվի առնելով, որ կազմակերպության կողմից վերը նշված ավտոմեքենաների սպասարկման նպատակով պայմանագրով սահմանված ժամկետում որևիցե գործողություն իրականացված չէ և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետը և 7.9 կետը ծանուցում եմ, որ ՊՈԱԿ-ը 2022 թվականի մայիսի 03-ից միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը:

Կազմակերպությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացվում են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/224 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 10:33-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/224 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/224 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի և «Լուքսորիա» ՍՊԸ-ի միջև 17.03.2022թ. կնքվել է թիվ «ՊՄԱԹ-ԳՀԾՁԲ-22/4-2» ծածկագրով պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Պատվիրատուն ըստ անհրաժեշտության հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. Պայմանագրի հավելված N 1-ի գնման ժամանակացույցով սահմանվել է , որ ծառայությունը մատուցվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը՝ յուրաքանչյուր դեպքում ծառայությունը մատուցվում է Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 20 օրվա ընթացքում:

3. Պատվիրատուն «Լուքսորիա» ՍՊԸ-ին ուղղված 17.03.2022թ. թիվ 1-190 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի և «Լուքսորիա» ՍՊԸ-ի միջև 2022 թվականի մարտի 17-ին կնքված պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր «ՊՄԱԹ-ԳՀԾՁԲ-22/4-2» ծածկագրով պայմանագրի շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել իրականացնել «Mitsubishi pajero io» մակնիշի 409 SS 60 պետհամարանիշի ավտոմեքենայի ընթացիկ նորոգման աշխատանքներ:

Խնդրում եմ «ՊՄԱԹ-ԳՀԾՁԲ-22/4-2» ծածկագրով պայմանագրով սահմանված ժամկետներում իրականացնել վերը նշված ավտոմեքենայի նորոգման աշխատանքները»:

4. Նշված գրությունն Ընկերությանը տրամադրվել է առձեռն 18.03.2022թ.:

5. Պատվիրատուն «Լուքսորիա» ՍՊԸ-ին ուղղված 02.05.2022թ. թիվ 1-309 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացվում է, որ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի /այսուհետ՝ ՊՈԱԿ/ և «ԼՈՒՔՍՈՐԻԱ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ կազմակերպություն /միջև 2022 թվականի մարտի 17-ին կնքված N ՊՄԱԹ-ԳՀԾՁԲ-22/4-2 ծածկագրով պայմանագրի /այսուհետ՝ պայմանագիր/ 1.1 կետի համաձայն կազմակերպությունը պարտավորվել է ՊՈԱԿ-ին մատուցել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /այսուհետ՝ ծառայություններ/: Պայմանագրի N 1 հավելվածի համաձայն ծառայությունը մատուցվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուց օրվանից հաշված մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը՝

յուրաքանչյուր դեպքում ծառայությունը մատուցվում է Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 20 օրվա ընթացքում:

Պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի համաձայն, Պատվիրատուն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Հայտնում եմ Ձեզ, որ ՊՈԱԿ-ի տնօրենի 2022 թվականի մարտի 17-ի թիվ 1-190 գրությամբ դիմել ենք կազմակերպությանը 409 SS 60 պետհամարանիշի ավտոմեքենայի ընթացիկ նորոգման աշխատանքներ կազմակերպելու նպատակով, սակայն 2022 թվականի մայիսի 02-ի դրությամբ կազմակերպության կողմից ծառայությունները մատուցված չեն: ՊՈԱԿ-ի տնօրենի 2022 թվականի 23-ի թիվ 1-202 գրությամբ դիմել ենք 523 SS 60 պետհամարանիշի ավտոմեքենայի համար սակայն 2022 թվականի մայիսի 02-ի դրությամբ կազմակերպության կողմից ծառայությունները մատուցված չեն:

Հաշվի առնելով, որ կազմակերպության կողմից վերը նշված ավտոմեքենաների սպասարկման նպատակով պայմանագրով սահմանված ժամկետում որևիցե գործողություն իրականացված չէ և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետը և 7.9 կետը ծանուցում եմ, որ ՊՈԱԿ-ը 2022 թվականի մայիսի 03-ից միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը»:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 02.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.05.2022թ. թիվ 26/26-1/8599-2022 գրությունը, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի 04.05.2022թ. թիվ 1-323 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ

այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի և «Լուքսորիա» ՍՊԸ-ի միջև 17.03.2022թ. կնքվել

է թիվ «ՊՄԱԹ-ԳՀԾՁԲ-22/4-2» ծածկագրով պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Պատվիրատուն ըստ անհրաժեշտության հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի հավելված N 1-ի գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ծառայությունը մատուցվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը՝ <u>յուրաքանչյուր դեպքում ծառայությունը մատուցվում է Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 20 օրվա ընթացքում:</u>

Պայմանագրի 7.1 կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պատվիրատուն «Լուքսորիա» ՍՊԸ-ին ուղղված 17.03.2022թ. թիվ 1-190 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի և «Լուքսորիա» ՍՊԸ-ի միջև 2022 թվականի մարտի 17-ին կնքված պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր «ՊՄԱԹ-ԳՀԾՁԲ-22/4-2» ծածկագրով պայմանագրի շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել իրականացնել «Mitsubishi pajero io» մակնիշի 409 SS 60 պետհամարանիշի ավտոմեքենայի ընթացիկ նորոգման աշխատանքներ:

<u>Խնդրում եմ «ՊՄԱԹ-ԳՀԾՁԲ-22/4-2» ծածկագրով պայմանագրով սահմանված ժամկետներում իրականացնել վերը նշված ավտոմեքենայի նորոգման աշխատանքները</u>»:

<u>Նշված գրությունն Ընկերությանը տրամադրվել է առձեռն 18.03.2022թ.:</u>

Պատվիրատուն «Լուքսորիա» ՍՊԸ-ին ուղղված 02.05.2022թ. թիվ 1-309 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացվում է, որ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի /այսուհետ՝ ՊՈԱԿ/ և «ԼՈՒՔՍՈՐԻԱ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ կազմակերպություն /միջև 2022 թվականի մարտի 17-ին կնքված N ՊՄԱԹ-ԳՀԾՁԲ-22/4-2 ծածկագրով պայմանագրի /այսուհետ՝ պայմանագիր/ 1.1 կետի համաձայն կազմակերպությունը պարտավորվել է ՊՈԱԿ-ին մատուցել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /այսուհետ՝ ծառայություններ/: Պայմանագրի N 1 հավելվածի համաձայն ծառայությունը մատուցվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուց օրվանից հաշված մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը՝ յուրաքանչյուր դեպքում ծառայությունը մատուցվում է Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 20 օրվա ընթացքում:

Պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի համաձայն, Պատվիրատուն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Հայտնում եմ Ձեզ, որ ՊՈԱԿ-ի տնօրենի 2022 թվականի մարտի 17-ի թիվ 1-190 գրությամբ դիմել ենք կազմակերպությանը 409 SS 60 պետհամարանիշի ավտոմեքենայի ընթացիկ նորոգման աշխատանքներ կազմակերպելու նպատակով, սակայն 2022 թվականի մայիսի 02-ի դրությամբ կազմակերպության կողմից ծառայությունները մատուցված չեն: ՊՈԱԿ-ի տնօրենի 2022 թվականի 23-ի թիվ 1-202 գրությամբ դիմել ենք 523 SS 60 պետհամարանիշի ավտոմեքենայի համար սակայն 2022 թվականի մայիսի 02-ի դրությամբ կազմակերպության կողմից ծառայությունները մատուցված չեն:

Հաշվի առնելով, որ կազմակերպության կողմից վերը նշված ավտոմեքենաների սպասարկման նպատակով պայմանագրով սահմանված ժամկետում որևիցե գործողություն իրականացված չէ և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետը և 7.9 կետը ծանուցում եմ, որ ՊՈԱԿ-ը 2022 թվականի մայիսի 03-ից միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 02.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

<u>բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:</u>

Այսպիսով՝ վերը շարադրվածի հաշվառմամբ արձանագրում եմ, որ «Լուքսորիա» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի միջև 17.03.2022թ. կնքված թիվ «ՊՄԱԹ-ԳՀԾՁԲ-22/4-2» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Լուքսորիա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.05.2022թ. թիվ 26/26-1/8599-2022 գրությամբ «Լուքսորիա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների

հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**